

ՁԵՌԱԳՐԱԿԱՆ

**14-ՐԴ ԴԱՐԻ ՅԱՅՏՆԻ ԳՐԻՉ ՆԱՏԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻ
ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍԵՐՏ ԿԱՊԵՐԸ ԿԵԱՆՔՈՒՄ ԵՒ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ**

Մուտք

14-րդ դարի 30-ականներից սկսած՝ Ղրիմը դարձավ Հայաստանի տարբեր գրչութեան կեդրոններից եկած աւանդների միաձուլման եւ յետագայ զարգացման կեդրոն:

Ղրիմի հայկական գաղութի պատմութեանն անդրադարձել են մի շարք ուսումնասիրողներ¹: Գաղութի սկզբնաւորման եւ զարգացման հարցերը քննելիս Լեւոն Խաչիկեանը եղած փաստերի շարքում մեծ ուշադրութիւն է դարձրել նաեւ Ղրիմում ընդօրինակուած ձեռագրերին՝ իբրեւ գաղթօջախի պատմութեան ուսումնասիրութեան լաւագոյն աղբիւրներ: Վերջիններիս մասին գրում է. «Երբ ուշադրութեամբ ծանօթանում ենք դրանց յիշատակարաններին, դարձեալ յանգում ենք այն եզրակացութեան, որ Ղրիմում հայկական գաղթօջախներ գոյութիւն են ունեցել 14-րդ դարից շատ առաջ»²:

Չնայած 11-13-րդ դդ. «Ղրիմի թերակղզու զանազան մասերում կար հայկական մըշտական բնակչութիւն»³, այնու ամենայնիւ ընդունուած է Ղրիմի հայկական գաղութը լիարժէք ձեւաւորուած համարել 14-րդ դարում:

Իսկ երբ է ձեւաւորուել Ղրիմի հայ գրչութեան կեդրոնը: Մինչեւ 14-րդ դարի առաջին կէսը Սուրխաթում ընդօրինակուած սակաւաթիւ ձեռագրեր են մեզ հասել. վերջիններիս գոյութիւնն արդէն փաստում է, որ մինչ 40-ական թուականների մեծ ներգաղթը Ղրիմում ձեռագրեր էին ընդօրինակում: Միւս կողմից էլ եղած օրինակները բաւարար չեն՝ կարծելու, որ Ղրիմի գրչութեան կեդրոնն արդէն ձեւաւորուած էր:

Այսպիսով, եթէ Ղրիմի հայ գրչութեան կեդրոնի ձեւաւորման շրջանը համարենք 14-րդ դարի 20-30-ական թթ., ապա 40-ական թուականները գրչութեան կեդրոնի ծաղկման շրջանն էր⁴: Նատեր գրչին կարող ենք համարել ծաղկման շրջանի հիմնադիրներից:

Գրիչ նատերը կնոջ՝ Մլհաւանի, չորս որդիների՝ Յովհաննէսի, Աւետիսի, Ստեփանոսի եւ Գրիգորի, դուստրերի՝ Տիկին եւ Հեղինէ անուններով, Ղրիմում յայտնուեց 1341-1342 թթ. ընթացքում: Սա այն ժամանակաշրջանն էր, երբ Հայաստանի տարբեր բնակավայրերը, որ արհեստագործական եւ առեւտրային երբեմնի ծաղկուն կեդրոններ

¹ Տե՛ս Խ. Փոքրեչյան, Ե՞րբ է կատարուել հայերի մուտքը Ղրիմ, «Պատմա-բանասիրական հանդէս», 1962, № 2, էջ 104-117, Վ. Միքայէլեան, Ղրիմի հայկական գաղութի պատմութիւն, Երեւան, 1964, Լ. Խաչիկեան, Հայերը հին Մոսկուայում եւ Մոսկուայ տանող ճանապարհների վրայ, Լ. Խաչիկեան, Աշխատութիւններ, հ. Բ, Երեւան, 2017, էջ 195-322 եւ այլն:

² Լ. Խաչիկեան, Հայերը հին Մոսկուայում եւ Մոսկուայ տանող ճանապարհների վրայ, Լ. Խաչիկեան, Աշխատութիւններ, հա. Բ, Երեւան, 2017, էջ 226-227:

³ Վ. Միքայէլեան, Ղրիմի հայկական գաղութի պատմութիւն, Երեւան, 1964, էջ 46:

⁴ Լ. Խաչիկեանը Ղրիմահայ գաղթօջախների պատմութիւնը բաժանում է չորս շրջափուլի: Ղրիմի գրչութեան կեդրոնի ձեւաւորման եւ ծաղկման շրջանը համապատասխանում է նշուած շրջափուլերից երրորդին, տե՛ս Լ. Խաչիկեան, Հայերը հին Մոսկուայում եւ Մոսկուայ տանող ճանապարհների վրայ, Լ. Խաչիկեան, Աշխատութիւններ, հ. Բ, Երեւան, 2017, էջ 218:

էին, տնտեսապէս քայքայուած էին մոնղոլական կեղեքիչ հարկերի եւ քոչուոր ցեղերի՝ մէկը միւսին յաջորդող արշաւանքների եւ աւերածութիւնների պատճառով⁵։ Նատերն այն մեծ թուով արհեստաւորներից էր, որոնք այդ շրջանում Ղրիմ գաղթեցին Բաբերդից եւ շրջակայ գաւառներից։ Շատերի պէս Նատերի ընտանիքի համար էլ Ղրիմը դարձաւ այն ապահով եւ նպաստաւոր վայրը, որտեղ ոչ միայն ֆիզիքական փրկութիւն գտան, այլեւ աշխատանքի հեռանկար տեսան։ Նատերը, յայտնուելով Սուրխաթ քաղաքում, հաստատուեց Վերին հողատներ յայտնի թաղամասում։ Բոլորովին նոր միջավայրում յայտնուած վարպետ⁶ գրչի գործունէութիւնը չընդհատուեց՝ դատելով 1342 թ. Սուրխաթում կատարած ձեռագրի ընդօրինակութիւնից։ Ըստ ամենայնի՝ Նատերը եւ իր նմանները Ղրիմում ոչ միայն եւ ոչ այնքան թշնամու գերութիւնից մազապուրծ գաղթականներ էին, այլ խաղաղ աշխատանքի հեռանկարով Ղրիմի առեւտրային եւ արհեստագործական աշխոյժ բնակավայրեր գաղթած արհեստաւորներ։

Այսպիսով, Նատեր գրիչը 1342 թ.-ից հաստատուեց Սուրխաթ քաղաքում, շարունակեց ձեռագրեր ընդօրինակել, դարձաւ ուսուցիչ եւ առաջնորդ որդիների եւ թոռների համար, ստեղծեց գրչագրական դպրոց՝ հարուստ ձեռագրական ժառանգութեամբ՝ դառնալով Նատերենց յայտնի տոհմի նախապապը⁷։ Մեծանուն գրիչն իր գործունէութեամբ դարձաւ Ղրիմի գրչութեան կեդրոնի եւ Ղրիմի հայ գաղթօջախի պատմութեան կարեւոր դերակատարներից մէկը։

Ընտանիքի անդամների ընդհանուր գործը

Նատեր գրչի մասնագիտութիւնը ժառանգեցին իր զաւակները, վարպետի բոլոր չորս որդիները գրիչներ էին։ Նատերի աւագ որդուն՝ վաղամեռիկ Յովհաննէսի գրչութեամբ ձեռագրեր մեզ չեն հասել, սակայն հաւանական ենք համարում, որ նա էլ եղբայրների պէս տիրապետում էր գրչութեան արուեստին, կատարում ընդօրինակութիւններ։ Յովհաննէսի մահուան առիթով գրած յայտնի յիշատակարանում որդու արժանիքները թուելիս Նատերը գրում է. «...կարգացողաց էր ցանկալի»⁸։ Այս տողը ենթադրել է տալիս, որ Յովհաննէսը գուցէ բանաստեղծ կամ գրիչ էր։ Միւս եղբայրների հետ Յովհաննէս եղբորը գրիչ է կոչում նաեւ Ստեփանոսը. «զեղբարսն իմ մեկնաւորք՝ զԱւետիս, զՅովհաննէս, զԳրիգոր եպիսկոպոս»⁹։ Յովհաննէսի՝ գրիչ լինելու մասին վկայութիւն կայ Նատերի որդի Ստեփանոսի աշակերտ Պօղոս գրչի՝ 1398 թ. գրած յիշատակարանում։ Գրիչը, ընթերցողին խնդրելով յիշել իր վարպետին, տալիս է նաեւ վերջինիս եղբայրների անունները. «... եւ զեղբարսն իւր՝ զտէր Գրիգոր եպիսկոպոսն, եւ զԱւետիք ծաղկաւղ, եւ զՅովհաննէս զանհաս գրիչն, եւ զամենայն համաւրէն ազգայինսն իւր յիշեսջիք յաղաթս ձեր, ամէն»¹⁰։ Յիշատակագիրը Յովհաննէսին անհաս գրիչ է կոչում։ Հետաքրքիր է անհաս բառի գործածութիւնը։ Ի հարկէ, քսան տարեկան հասակում մահացած

⁵ Տե՛ս Հայոց պատմութիւն, հ. II, միջին դարեր (IV դար-XVII դարի առաջին կէս), գիրք երկրորդ (IX դարի կէս-XVII դարի առաջին կէս), Երեւան, 2014, էջ 526-528։

⁶ Գրչի վարպետութեան մասին են վկայում ստեղծագործական առաջին շրջափուլին վերաբերող ընդօրինակութիւնները՝ արուած Բաբերդում 1334-1341 թթ.։

⁷ Նատեր գրչի ընտանիքի գործունէութեան մասին տե՛ս Է. Կորյսմազեան, Դրիմի հայ մանրանկարիչների մի ընտանիքի մասին, ՊԲՀ, № 2, 1968, էջ 184-190; Ն. Արք. Ծովակաճ, Նատեր գրիչ եւ Նատերեանք, «Սիոն», թիւ 11-12, 1973, էջ 358-360։

⁸ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԴ դար, մասն Բ (1326-1350 թթ.), կազմողներ՝ Լ. Խաչիկեան, Ա. Մաթևոսեան, Ա. Ղազարոսեան, Երեւան, 2020, էջ 405։

⁹ ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 538։

¹⁰ Նոյն տեղում, էջ 623։

Յովհաննէսը, ըստ էութեան դեռեւս անհաս գրիչ էր «տհաս», «խակ»¹¹ իմաստով, այնուամենայնիւ կարծում ենք բառը գործածուած է «անհասանելի», «բարձր», «անգերազանցելի» իմաստով՝ հաշուի առնելով, որ Պօղոս գրիչն իր ուսուցչին նոյնպէս այդ բառով է բնութագրում՝ «զվարպետն իմ զՍտեփանոս Նատերանց զանհաս գրիչն»։ Յանկացած դէպքում 1398 թ. գրուած այս տողերը Յովհաննէսի գրիչ լինելու մասին հերթական վկայութիւնն են։

Նատերի կրտսեր որդի Գրիգորի գրչութեամբ մէկ ձեռագիր Աւետարան է մեզ հասել՝ ՄՄ 8388՝ գրուած 1357 թ.։ Չի բացառուում, որ Գրիգորը առնուազն 1362 թ.՝ եպիսկոպոս ձեռնադրուելուց յետոյ գուցէ մասամբ հեռացել էր տոհմական զբաղմունքից։ Այդ հանգամանքը, սակայն, թոյլ չի տալիս ենթադրել գրչի պակաս վարպետութեան մասին։ Վստահաբար, Գրիգորը լիովին տիրապետել է գրչութեան արուեստին։ Այդ մասին վկայութիւն ունի նրա եղբայր Աւետիսը. իր եղբայրների մասին գրում է. «Յիշեցէք եւ զՍտեփանոս քահանա եւ զտէր Գրիգոր եպիսկոպոս Խաղտեաց գաւառի՝ զհարազատ եղբարս իմ եւ զքաջագրիչսն»¹²։

Որդիներից առաւել բեղուն գործունէութիւն էին ծաւալում Աւետիսը եւ Ստեփանոսը, որոնք գրիչ լինելուց բացի նաեւ ծաղկողներ էին, եւ որոնցից առանձնակի բարձր արուեստով են փայլում Աւետիսի ձեռագրերը։

Շատ կարեւոր է Նատերենց ստեղծած ձեռագրական ժառանգութեան ընդհանուր, ամբողջական ընկալումը եւ քննութիւնը ոչ միայն այն պատճառով, որ ընտանիքի անդամները, լինելով մէկ գրչի՝ Նատերի աշակերտները, միեւնոյն ձեռագրական աւանդների կրողն էին, այլեւ այն պատճառով, որ շատ անգամ աշխատում էին միասին։ Երբ ուշադրութեամբ հետեւում ենք տոհմի ստեղծած ձեռագրաշարքին (աւելի քան 30 ձեռագիր), նկատում ենք, որ Նատեր գրիչը, վաղ պատանեկութիւնից որդիներին ուսուցանելով գրչութեան արուեստը, վերջիններիս աստիճանաբար մասնակից էր դարձնում ձեռագրաստեղծման աշխատանքներին։ 1342 թ. Սուրխաթում ընդօրինակած Աւետարանի յիշատակարանում Նատեր գրիչը գրում է. «զորդին իմ՝ զԱւետիս, որ զմանր ծաղիկն շինեաց նոր»¹³։ Հաշուի առնելով, որ 1342 թ. Նատերի ընտանիքի՝ Ղրիմում հաստատուելու առաջին տարին էր, հասկանալի է, որ որդիներից առնուազն Աւետիսը եւ իրենից աւագ Յովհաննէսը Բաբերդում արդէն գրչութեան արուեստ էին սովորում, գուցէ նաեւ օգնում հօրը։ 1342 թ. հօր ընդօրինակած ձեռագիրը փոքրիկ զարդանախշերով զարդարող Աւետիսը 1344 թ. կրկին հօր գրչագրած Աւետարանում (ՄՄ 7637) երկու ծաղկողներից մէկն է¹⁴, իսկ 1346 թ. Աւետարանում (ՄՄ 7636) յիշատակում է իբրեւ ձեռագրի ծաղկող եւ կազմող՝ «զնկարող եւ զսանտրող»¹⁵։ 1348 թ. Աւետարանում (ՄՄ 7857) Աւետիսը հանդէս է գալիս ինքնուրոյն՝ իբրեւ գրիչ եւ ծաղկող։

Նոյն կերպ 1347 թ. հօրը թուղթ կոկելով օգնող Գրիգորը 1357 թ. ինքնուրոյն Աւետարան է ընդօրինակում։

¹¹ Ս. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 1, Երեւան, 1944, էջ 139։

¹² ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 467։

¹³ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԴ դար, մասն Բ, (1326-1350 թթ.), կազմողներ՝ Լ. Խաչիկեան, Ա. Մաթևոսեան, Ա. Ղազարոսեան, Երեւան, 2020, էջ 388։

¹⁴ Դա պարզել է է. Կորիսմազեանը՝ համեմատելով ՄՄ 7637 եւ ՄՄ 7636 ձեռագրերի մանրանկարները, տե՛ս Է. Կորիսմազեան, Դրիմի հայ մանրանկարիչների մի ընտանիքի մասին, ՊԲՀ, № 2, 1968, էջ 185։

¹⁵ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԴ դար, մասն Բ, (1326-1350 թթ.), կազմողներ՝ Լ. Խաչիկեան, Ա. Մաթևոսեան, Ա. Ղազարոսեան, Երեւան, 2020, էջ 432։

Այսպէս, աւագութեան կարգով Նատերը, որդիների ձեռքը բռնած, սովորեցնում, «ընտելացնում» է գրչութեան արուեստին, այնուհետեւ բաց է թողնում ինքնուրոյն աշխատանքի:

Նոյն շղթան շարունակում է նաեւ յաջորդ սերունդը: Նոյնանուն Յովհաննէս որդիներին սովորեցնելու, ապա նրանց հետ աշխատելու աւանդոյթը շարունակում են նաեւ Աւետիսը եւ Ստեփանոսը: Աւետիսի որդի Յովհաննէսը 1371 թ. իր ընդօրինակած *Ճաշոցի (ՄՄ 7449)* յիշատակարանում գրում է. «յիշեսջի՛ք... զծաղկաւղ եւ շնորհազարդաւղ այսմ աստուածապատում մատենիս զԱւետիս դպիրն, զերեւելի եւ ականաւոր գրիչն, զորդին Նատերի քաջ իմաստասիրին»¹⁶: Ըստ *ամենայնի՝ Աւետիսը*, լինելով աւագը եղբայրների մէջ եւ հմուտ ծաղկող, իր վրայ է վերցրել նկարազարդման արուեստն ուսուցանողի դերը: Ասուածի վկայութիւնն են ծաղկող Ստեփանոսի աշխատանքների նմանութիւնները, ինչ-որ տեղ կրկնօրինակման փորձերը Աւետիսի գործերին, չնայած զիջում են վերջիններիս իրենց վարպետութեամբ¹⁷:

Յովհաննէս որդուն սովորեցրել եւ նրա հետ աշխատել է նաեւ Ստեփանոսը (*ՄՄ 7446, ՄՄ 3863, Երսղ. 12*): Այսպէս, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի Հմր 12 ձեռագրի յիշատակարանում գրում է. «զՅովհաննէս որդեակն իմ, որ աշխատեցաւ ի խամ ծաղիկ սորա»¹⁸:

ՄՄ 7446 մատեանի գրիչ Մարկոսը ձեռագրի ծաղկողներ է յիշատակում Ստեփանոս Նատերենց գրչին «եւ զորդեակն իւր Յոհաննէս քահանայ ծաղկաւղ»¹⁹: Հայր եւ որդի աշխատել են նաեւ *ՄՄ 3863* ձեռագիրը գրելիս. հայրը գրիչն է, որդին՝ ծաղկողը²⁰:

Ինչպէս երեւում է, Նատերը որդիներին փոխանցել էր ոչ միայն իր մասնագիտութիւնը, այլեւ գրչութեան արուեստը կրտսերներին ուսուցանելու աւանդոյթը. ինչպէս Նատերը, այնպէս էլ որդիները, լինելով հմուտ վարպետներ, նաեւ ուսուցանող վարպետներ էին:

Այսպիսով, մեծանուն գրիչ Նատերը իր ժառանգներին ոչ միայն սովորեցնում էր, այլեւ «ներկայ» էր նրանց աշխատանքում: Մեզ հասած մի շարք ձեռագրեր «ստեղծել» են միասին՝ ընտանիքով. հայրը գրիչն էր, որդին՝ օգնող գրիչը կամ ծաղկողը: Կամ որդին գրիչն էր, ինքը՝ կազմողը: Նոյնիսկ ծեր հասակում, երբ պակասել էր աչքի լոյսը եւ ձեռքերի ուժը, նա շարունակում էր ձեռագիր ընդօրինակել կամ գոնէ մասամբ մասնակցել այդ գործին: *ՄՄ 6938* ձեռագիրը Աւետիս գրչի վկայութեամբ, որը նաեւ մատեանի ստացողն է, մեծ մասամբ ընդօրինակել է ալեւոր հայրը. «սկսայ ես՝ անպիտանս, ի սկիզբն, եւ գրեցի սակաւ ինչ եւ զայլն ետու ի հայրն իմ ծերացեալ, որոյ Նատեր կոչի»²¹: Հետաքրքիր է տեսնել որդիների ջերմ ու խոնարհ վերաբերմունքը հօր հանդէպ, որդիական սէրը եւ միաժամանակ աշակերտի խորը ակնածանքը: Աւետիս գրիչը հօրը բնութագրում է հետեւեալ խօսքերով. «Նատեր բազմամեայ ծեր գրիչ ժրաջան», «Նա-

¹⁶ Ժ. Դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 500:

¹⁷ Տէս Ծ. Корхмазян, Армянская миниатюра Крыма (XIV-XVII вв.), Ереван, 1978, стр. 42-43:

¹⁸ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Բ. Առաջին, կազմեց՝ Նորայր Եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1966, էջ 90:

¹⁹ Ժ. Դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 595:

²⁰ Է. Կորիսմագեանը բարձր է գնահատում Յովհաննէս ծաղկողի արուեստը: Արուեստաբանը կարծում է, որ Յովհաննէսը ծանօթ է եղել իրեն ժամանակակից իտալացի վարպետների գործերին, որոնցից նկարազարդման արուեստի նոր մեթոդներ է սովորել: Տէս Ծ. Корхмазян, Армянская миниатюра Крыма (XIV-XVII вв.), стр. 60:

²¹ Ժ. Դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 413:

տեր գրիչ եւ իմաստուն»²²: Յիշատակարաններում հօրը մշտապէս յիշատակում է նաեւ Ստեփանոսը՝ իբրեւ «ժրաջան գրիչ», «ծնող» եւ «ուսուցանող»²³:

Մեծահամբավ գրիչ հօր եւ պապի հանդէպ նոյն ջերմութիւնը տեսնում ենք նաեւ թոռների յիշատակարաններում: Աւետիսի որդի Յովհաննէսը 1371 թ. գրում է. «յիշեալք զԱւետիս դպիրն՝ զերեւելի եւ ականաւոր գրիչն, զորդին Նատերի քաջ իմաստասիրին»²⁴:

Որդիների յիշատակարաններում Նատեր գրչի վերաբերեալ յաճախակի յիշատակումները, դրուատանքի եւ երախտագիտութեան խօսքերը պայմանաւորուած են ոչ միայն հայր-որդի կապով, այլեւ ուսուցիչ-աշակերտ կապով: Զաւակների համար, անշուշտ, հպարտութիւն էր Նատերի պէս հայր եւ ուսուցիչ ունենալը: Զմոռանանք նաեւ, որ մեծանուն վարպետին յիշատակելով՝ գրիչն անուղղակիօրէն ընդգծում էր նաեւ իբրեւ գրիչ իր հմտութիւնները եւ մատենի արժանիքները:

Այսպէս, մեծանուն գրիչ Նատերի բազմաշխատ գործունէութեան մէջ խիստ կարեւոր եղաւ ուսուցանումը: Իր մասնագիտութիւնը փոխանցելով զաւակներին եւ թոռներին՝ գրչութեան արուեստը վերածեց տոհմական զբաղմունքի, հիմնեց ձեռագրական դպրոց՝ լաւագոյնս դրսեւորուելով իբրեւ բարձրարուեստ գրիչ, մեծավաստակ ուսուցիչ՝ հսկայական աւանդ ունենալով Ղրիմի հայ գրչութեան կենտրոնում:

Ընտանիքի անդամների սերտ կապերը

Նատերենց ձեռագրերը հարուստ են յիշատակարաններով: Մեծամասամբ ծաւալով ընդարձակ «փառքով» յիշատակարաններ են՝ ժանրին բնորոշ յատկանիշներով:

Ինչպէս իրաւացիօրէն նկատել է Խաչիկ Յարութիւնեանը, «յիշատակարանը, որպէս ձեռագրում գրչի անձնական տարածք, վերջինի համար ծառայել է ոչ միայն որպէս ստեղծագործելու, այլեւ երբեմն որպէս հասարակական, քաղաքական, կրօնական եւ կենցաղային տարբեր խնդիրների արծարծման ինքնատիպ հարթակ»²⁵: Այսպէս, իրենց «անձնական տարածքում», Նատերի տոհմի գրիչները ձեռագրի ստեղծման հանգամանքներն արձանագրելուց զատ եւ ստեղծագործել են, եւ հասարակական, քաղաքական խնդիրներ արծարծել, եւ ընտանեկան կարեւոր դրուագներ յիշատակել՝ վերջինների վերաբերեալ արտայայտելով իրենց վերաբերմունքը, յոյզերն ու ապրումները:

Յիշատակութիւններ կան ժամանակի պատմական այս կամ այն դէպքերի ու դէմքերի, թշնամու յարձակումների, գաղթի մասին: Այդ կարեւոր սկզբնաղբիւրները չեն վրիպել Ղրիմի հայ գաղութի պատմութիւնն այս կամ այն չափով ուսումնասիրողների աչքից: Այդ առումով շատ հետաքրքրական է ՄՄ 3797 ձեռագրի յիշատակարանը: Ընդարձակ շարադրանքում Նատերը՝ որպէս ձեռագրի ստացողներ, յիշատակում է ամենատարբեր արհեստների տիրապետող բազմաթիւ մարդկանց անուններ՝ ներկարար, կօշկակար, դերձակ, հիւսն եւ այլն: Ի թիւս այլ ուսումնասիրողներ՝ Լ. Խաչիկեանը քըննում է այս յիշատակարանը՝ իբրեւ հերթական վկայութիւն զրիմահայ գաղութի վաղեմութեան մասին. «Այսպիսով, Սուրխաթի հայ գաղութում ապրել ու աշխատել են բազմապիսի արհեստների տէր անձինք, իսկ այդ կարող էր լինել գաղութի սկզբնաւորումից

²² Ժ. Դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 457, 467:

²³ Նոյն տեղում, էջ 460, 538:

²⁴ Նոյն տեղում, էջ 500:

²⁵ Խ. Յարութիւնեան, Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Երեւան, 2019, էջ 302:

առնուազն մի քանի տասնամեակ (եթե ոչ հարիւրամեակ) յետոյ»²⁶:

Նատերի ընտանիքի անդամները իրենց յիշատակարաններում յաճախ արձանագրել են ընտանեկան այս կամ այն կարեւոր դրուագներ: Այդ դրուագներից մէկն է Նատերի աւագ որդու՝ քսանամեայ Յովհաննէսի մահը 1344 թ.: Այս կորուստը ծանր ողբերգութիւն է դարձել ընտանիքի կեանքում եւ արտացոլուել հօր եւ եղբայրների բազմաթիւ յիշատակարաններում: Առանձնակի ուշադրութեան է արժանի Նատեր գրչի՝ որդու մահուան առիթով գրած ողբ-յիշատակարանը ՄՄ 7637 ձեռագրում²⁷: Հեղինակն այն չափածոյ է գրել, որն աւելի ազդեցիկ եւ գրաւիչ է դարձնում որդու կորստի ցաւով պատուած հօր խօսքը.

«Նուաստ Նատերս ողորմելի
է ինձ եղուկ յայս կենցաղի.
Սուգ ժամանեաց ողորմաղի,
Որով ողբոց եմ արժանի»²⁸:

Յիշատակարանը գրուած է ութվանկանի չափով, «ի» յանգով: Ծայրակապով գրուած տողերից յօդուում է հետեւեալը. «ՅՈՂԱՆՆԷՍ ՈՐԴԵԱԿ ԻՄ ՎԱՅ Է ԶՐԿՈՂԱՅՍ Ի ՔԷՆ ԱՅ ՎԱՅ»: Տողերը գրել է չափածոյին բնորոշ ոճով, իւրաքանչիւր տող գրուած է նոր տողից, տողերի սկզբնատառերն էլ գլխագրով՝ ընդգծելու համար ծայրակապը: Յիշատակարանն ընթերցելիս տեսնում ենք, որ Նատերը հմտօրէն տիրապետել է տաղաչափական արուեստին: Յիշատակարանում գործածած ութվանկանի, ինչպէս նաեւ տասներկու վանկանի չափերը յաջողութեամբ կիրառել է նաեւ մի քանի այլ չափածոյ յիշատակարաններում²⁹, որոնք նոյնպէս վկայում են Նատերի գրչի վարպետութեան մասին նաեւ բանաստեղծական խօսքում:

Յիշատակարանում դրսեւորուում է Նատերի պատկերաւոր մտածելակերպը: Ակընյայտ է, որ նա ոչ միայն լիարժէքօրէն տիրապետում է միջնադարեան բանաստեղծական ձեւերին, այլեւ՝ յաջողութեամբ կիրառում պատկերաւորման միջոցներ. խօսքը համեմունք է փոխաբերութիւններով, չափազանցութիւններով, մակդիրներով: Այս ամէնը, ինչպէս նաեւ յիշատակագրի՝ ընթերցողի հետ զգացմունքային եւ անկեղծ կապ ստեղծելու ունակութիւնը Նատերի յատկապէս չափածոյ յիշատակարաններին գեղարուեստական արժէք են հաղորդում, իսկ մեզ թոյլ են տալիս մեծանուն գրչին ընկալել նաեւ իբրեւ ստեղծագործող հեղինակ:

Հենրիկ Բախչինեանն այսպիսի յիշատակարաններն անուանում է նաեւ դամբանական, «որոնք իրենց բնոյթով մօտ են ժողովրդական մահերգերին եւ մեռելաթաղի գանձերին»³⁰: Անշուշտ, ժանրային յատկանիշներով այս յիշատակարանը շատ մօտ է ժողովրդական ողբին: Վերջինիս մասին Պօղոս Խաչատրեանը գրում է. «Այն մի կող-

²⁶ Լ. Խաչիկեան, Հայերը հին Մոսկուայում եւ Մոսկուայ տանող ճանապարհների վրայ, Լ. Խաչիկեան, Աշխատութիւններ, հ. Բ, Երեւան, 2017, էջ 228:

²⁷ Զեռագրի գրչութեան ժամանակը, ինչպէս նաեւ Յովհաննէս որդու մահուան թուականը պարզել է Լեւոն Խաչիկեանը՝ 1347 թ. Նատեր գրչի կատարած մէկ այլ ընդօրինակութեան հետ համեմատութեան արդիւմբում, տե՛ս Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԴ դար, մասն Բ, (1326-1350 թթ.), կազմողներ՝ Լ. Խաչիկեան, Ա. Մաթեոսեան, Ա. Ղազարոսեան, Երեւան, 2020, էջ 405 ձմբ.:

²⁸ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԴ դար, մասն Բ, (1326-1350 թթ.), կազմողներ՝ Լ. Խաչիկեան, Ա. Մաթեոսեան, Ա. Ղազարոսեան, Երեւան, 2020, էջ 405:

²⁹ ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 362, 435, 466:

³⁰ Հ. Բախչինեան, Հայկական ձեռագրերի յիշատակարանները, Երեւան, 1980, էջ 37:

մից անդարձ կորուսեալի բարձրագոյ փառաբանութիւն, նրա գործի, անձի ու անուան հռչակում է եղել, միւս կողմից՝ ապրողների ինքնագրկանքի, ինքնատանջի, անմխիթար վշտի արտայայտութիւն»³¹:

Դառնացած եւ խորը կսկիծով է Նատերը գրում որդու կորստի մասին: Ի դէմս գրու- չի՝ տեսնում ենք որդեկորոյս հօր սգաւոր կերպարը:

Ինչպէս ժողովրդական ողբում, այստեղ էլ յիշատակարանի հեղինակը մեծ ջերմու- թեամբ է նկարագրում որդու արժանիքները. իւրաքանչիւր արժանիք կարծես մի փոքր դարման է դառնում ցաւից մորմոքող հօր սրտին.

«էր ամենայն շնորհիւ ի լի
Զարթ եւ պարծանք մերոյ սեռի,
Րասդուն մտաւք եւ հոգելի,
Կարդացողաց էր ցանկալի,
Ունէր ճաշակ եղանակի,
Ղորդ ի յարհեստ երաժշտի»³²:

Մեռնողի արժանիքները մի կողմից աւելի են խորացնում կորստեան ցաւը, միւս կողմից՝ մխիթարութիւն բերում ցաւը կրող յիշատակագրին: Վշտից մոլորուած հայրը փափաքում է Աստծոյ մխիթարութեան մասին.

«Ավանդ հազար բերան ի լի
Յայսմ ժամու, որ ես հասի,
Չունիմ ճարակ ապաւինի,
Այլ զՀոգին Սուրբ, թէ ինձ հասնի»³³:

Բանաստեղծական մեծ վարպետութեամբ, խորը զգացմունքայնութեամբ գրուած այս ողբ-յիշատակարանը ընթերցողի մօտ յուսահատ հեղինակին կարեկցելու, սրտա- կից լինելու անկեղծ ցանկութիւն է առաջացնում: Այս յիշատակարանի հիմքում համա- մարդկային արժէքներ են. Նատերի գրած տողերը զաւակի հանդէպ ծնողական մեծա- գոյն սիրոյ, անսահման հպարտութեան, միեւնոյն ժամանակ զաւակին կորցրած ծնողի անշափելի ցաւի մասին են:

Գալով Յովհաննէսի մահուան հանգամանքներին՝ էմմա Կորիւմազեանը կարծում է, որ նա դէպի Ղրիմ գաղթի ճանապարհին է մահացել³⁴: Ի հարկէ չժխտելով գիտնա- կանի դիտարկումը՝ փորձենք աւելի մանրամասն վերլուծել եղած փաստերը: Որդուն նուիրուած չափածոյ յիշատակարանը գրուած է 1344 թ. (ՄՄ 7637)³⁵: Ինչպէս փաստում է Վիեննայի Հ^{մր} 849 Աւետարանի յիշատակարանը³⁶, Նատերը 1342 թ. արդէն Ղրիմում էր: Կարծում ենք գիտնականը, ծանօթ չլինելով նշուած ձեռագրին, Նատերի՝ Ղրիմում

³¹ Պ. Խաչատրեան, Հայ միջնադարեան պատմական ողբեր (ԺԴ-ԺԵ դդ.), Երեւան, 1969, էջ 8-9:

³² Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԴ դար, մասն Բ, (1326-1350 թթ.), կազմողներ՝ Լ. Խաչիկեան, Ա. Մա- թեոսեան, Ա. Ղազարոսեան, Երեւան, 2020, էջ 405-406:

³³ Նոյն տեղում, էջ 406:

³⁴ Է. Կորիւմազեան, «Ղրիմի հայ մանրանկարիչների մի ընտանիքի մասին», ՊԲՀ, 1968, № 2, էջ 185:

³⁵ Ձեռագրի գրչութեան թուականը պարզել է Լեւոն Խաչիկեանը. տե՛ս ՀՀայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԴ դար, մասն Բ, (1326-1350 թթ.), կազմողներ՝ Լ. Խաչիկեան, Ա. Մաթեոսեան, Ա. Ղազարոսեան, Երեւան, 2020, էջ 405, ծնթ. 1:

³⁶ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԴ դար, մասն Բ, (1326-1350 թթ.), կազմողներ՝ Լ. Խաչիկեան, Ա. Մա- թեոսեան, Ա. Ղազարոսեան, Երեւան, 2020, էջ 388:

գրչագրած առաջին ձեռագիրը համարել է ՄՄ 7637 Աւետարանը՝ ենթագրելով, որ ընտանիքը գուցէ նոյն տարում է Ղրիմ գաղթել, Յովհաննէսն էլ գաղթի ճանապարհին է մահացել: Անշուշտ, գաղթի ճանապարհը լի էր վտանգներով, աւերներով ու ջարդերով: Այնուամենայնիւ, գիտնականի կարծիքը հաստատող որեւէ փաստ չունենք: Աւելին, 1342 թ. Սուրիաթում գրուած յիշատակարանում Նատեր գրիչը որդու մահուան մասին չի խօսում, ինչը վերստին փաստում է, որ Յովհաննէսն այդ ժամանակ ողջ էր եւ հետեւաբար ոչ թէ գաղթի ճանապարհին, այլ Ղրիմում է մահացել:

Ինչպէս տեսնում ենք յիշատակումներից, Յովհաննէսի մահուանը յաջորդել է նաեւ Նատերի Տիկին անունով դստեր մահը: 1346 թ. յիշատակարանում Նատեր գրիչը գրում է. «զՅովանէս սարկաւագ, որ տղայ հասակաւ ել աստի եւ եմուտ առ Քրիստոս... եւ քոյր նորա զկնի նորա գնաց, ողորմութիւն գտցեն նոքա յողորմածէն Աստուծոյ ձերով սուրբ աղօթիւք»³⁷: Ընտանիքի աւագ որդու, որից յետոյ նաեւ դստեր վաղաժամ մահը անշուշտ ծանր հարուած էր ոչ վաղ անցեալի գաղթի, ինչպէս նաեւ նոր միջավայրում հաստատուելու դժուարութիւնները ճաշակող հօր եւ ընտանիքի համար:

Յովհաննէս եղբօր վաղաժամ մահը մեծ սուգ եւ յուսահատութիւն է պատճառել նաեւ եղբայրներին: Հանգուցեալ եղբօր հանդէպ ջերմ սէրը, կորստեան ցաւը արտացոլուել է նաեւ նրանց յիշատակարաններում: Առաւել առատախօս է Աւետիս գրիչը, նա գրում է. «կրկին աղաչեմ յիշեա՛ եւ զգովելի անձն, զցանկալի տիպն, զեղբայր թշուառութեանս իմոյ՝ զՅովաննէս սարկաւագ, որ ի մանկութեան հասակ փոխեցաւ ի կենացս եւ զիս եթող ի մէջ բազմածուփ ալեաց...»³⁸:

Շատ հետաքրքրական է Նատերի երկու Յովհաննէս թոռների անուան հարցը: Անունների սերնդային կրկնութիւնը Նատերի ընտանիքում նորութիւն չէր. Գրիգոր որդին եւ Տիկին անունով դուստրը Նատերի ծնողների անուններն էին կրում: Ըստ ազգագրագէտ Ռաֆիկ Նահապետեանի՝ հայ իրականութեան մէջ երեխաներին տան աւագների անուններով կնքելուց բացի կնքում էին նաեւ հանգուցեալ հարազատների անուններով: «Դրանով կամենում էին ննջեցեալ ազգականի յիշատակը վառ պահել, յաւերժացնել»³⁹: Մեծ հաւանականութեամբ երկու Յովհաննէս թոռներն էլ ծնուել են Յովհաննէս որդու մահից յետոյ: Աւետիսը, որը փոքր էր քսանամեայ Յովհաննէս եղբօրից, հազիւ թէ արդէն որդի ունենար 1344 թ.: Ասուածը առաւելապէս վերաբերում է նաեւ Ստեփանոսին, որը 1347 թ. դեռեւս պատանի է յիշատակում⁴⁰: Չմոռանանք ի հարկէ, որ Յովհաննէսը միջնադարի հայ իրականութեան մէջ խիստ տարածուած անձնանուններից էր⁴¹: Աւելին, ըստ Հ. Աճառեանի՝ 14-րդ դարում Յովհաննէս անուան տարբերակներն անգամ տարբեր անուններ են համարուել⁴²: Այնու ամենայնիւ, Աւետիսի եւ Ստեփանոսի՝ իրենց որդիներին նոյն անուամբ կնքելու հանգամանքը կարծում ենք նոյնպէս պէտք է ընկալել ընտանեկան ջերմ եւ ամուր կապերի համատեքստում: Ըստ ամենայնի՝ հանգուցեալ եղբօր անուանակոչութեամբ եղբայրները ոչ միայն ձգտում էին եղբօր

³⁷ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԴ դար, մասն Բ, (1326-1350 թթ.), կազմողներ՝ Լ. Խաչիկեան, Ա. Մաթեոսեան, Ա. Ղազարոսեան, Երեւան, 2020, էջ 432:

³⁸ Նոյն տեղում:

³⁹ Ռ. Նահապետեան, Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կէս-XX դ. սկիզբ), Պատմաազգագրական ուսումնասիրութիւն, Երեւան, 2012, էջ 45:

⁴⁰ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԴ դար, մասն Բ, (1326-1350 թթ.), կազմողներ՝ Լ. Խաչիկեան, Ա. Մաթեոսեան, Ա. Ղազարոսեան, Երեւան, 2020, էջ 452:

⁴¹ Տե՛ս Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հ. 3, Երեւան, 1942, էջ 537:

⁴² Տե՛ս նոյն տեղում, էջ 538:

յիշատակը վառ պահել, այլեւ իրենց որդիներին փոխանցել բազմաշնորհ հօրեղբոր արժանիքները:

Ինչպէս տեսնում ենք, Նատերենց յիշատակարանների տողերից յորդում է ջերմ ու հոգատար վերաբերմունքը միմեանց նկատմամբ: Մեծագոյն սիրով եւ հպարտութեամբ են նրանք խօսում Նատերի կրտսեր որդի Գրիգորի մասին: Յայտնի է, որ վերջինս 1362 թ. Սիսում եպիսկոպոս է ձեռնադրուել եւ ծառայութեան անցել հայրենի Բաբերդ (Խաղտեաց) գաւառում⁴³: Եղբոր եպիսկոպոսական օժման արարողութեանը, որ հպարտութեան մեծագոյն առիթ էր յատկապէս ընտանիքի անդամների համար, արքայական Սիս քաղաքում մասնակցել է նաեւ Աւետիսը, ինչի մասին գրել է իր յիշատակարանում⁴⁴:

Աւետիսը գրում է. «Յիշեցէք... եւ զտէր Գրիգոր, որ է իմ հայր ըստ հոգւոյ եւ եղբայր ըստ մարմնոյ եւ որդի հոգեւոր ըստ ուսման»⁴⁵: Ինչպէս տեսնում ենք, գրիչը, կրտսեր եղբոր նկատմամբ ունենալով աւագի, հոգեւոր հօր, այսինքն ուսուցչի, ինչ-որ տեղ նաեւ հայրական հոգատարութիւն, նախ եւ առաջ մեծագոյն պատկառանք եւ խոնարհութիւն է տածում: Աւետիսի համար նորընծայ եպիսկոպոս Գրիգորը առաջին հերթին հոգեւոր հայր է, յետոյ միայն՝ եղբայր եւ աշակերտ:

Գրիգորի եպիսկոպոսութիւնը եւ յատկապէս ծառայութիւնը հայրենի Բաբերդում վստահաբար մեծագոյն հպարտութիւն եւ ուրախութիւն էր առաջին հերթին ծնողների համար: Դա նաեւ հարմար առիթ է դառնում, որ ծերունի Նատերը կնոջ՝ Մլհաւանի հետ հայրենի գաւառ վերադառնալ թողնելով Ղրիմը, որտեղ շուրջ քսան տարի գործունէութիւն էր ծաւալում, եւ որը իր երկրորդ տունն էր դարձել:

Ընտանեկան այս դրուագը հերթական անգամ մեզ հնարաւորութիւն է տալիս տեսնել Նատերի ընտանիքում ծնողների եւ որդիների, ինչպէս նաեւ զաւակների միջեւ յարաբերութիւնների հիմքում դրուած անշահախնդիր սէրն ու նուիրուածութիւնը: Նատերի՝ Բաբերդ վերադարձը ծնողների կողմից կրտսեր որդու նկատմամբ մեծագոյն հոգատարութեան դրսեւորում է: Այն միաժամանակ հոգատարութեան դրսեւորում է նաեւ ծնողների հանդէպ. եպիսկոպոս որդու համար ամէն ինչից զատ անշուշտ մեծագոյն երջանկութիւն էր ծնողների՝ իրենց կեանքի մայրամուտը հայրենիքում ապրելու հոգածութիւնը:

Յիշատակումները ընտանիքի անդամների վերաբերեալ բազմաթիւ են: Քննուող բոլոր օրինակները, ինչպէս նաեւ Նատերենց ողջ գործունէութիւնը գերդաստանում տիրող հոգատար եւ ջերմ մթնոլորտի վկայութիւնն են:

Հարկ ենք համարում ընդգծել, որ ընտանեկան կապերը գրիչ եւ ծաղկող վարպետների համար նաեւ միասին աշխատելու նպաստաւոր պայմաններ էին ստեղծում: Միմեանց նկատմամբ ունեցած լիարժէք ճանաչողութիւնն ու անվերապահ վստահութիւնը անշուշտ հնարաւորութիւն էին տալիս համատեղ աշխատանքում լաւագոյնս իրացնել իւրաքանչիւրի տաղանդն ու հմտութիւնները: Անշուշտ, կար նաեւ երեւոյթի հակառակ կողմը: Ընտանեկան ջերմ կապերին նպաստում էր նաեւ միեւնոյն զբաղմունքը. ձեռագիրը «միաւորում էր» բոլորին: Ընդհանուր հետաքրքրութիւնն ու մասնագիտութիւնը

⁴³ Ընտանեկան այս կարեւոր դրուագի մասին մանրամասն խօսել ենք մեր յօդուածում, տե՛ս Գ. Չատեան, Ղրիմի նշանաւոր գրիչ Նատերի՝ ընտանեկան կարեւոր մի դրուագի նշգրտման փորձ, ԲՄ № 38, 2024, էջ 158-169:

⁴⁴ ԺՂ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 456:

⁴⁵ Նոյն տեղում, էջ 457:

ընտանիքի անդամների միջեւ համերաշխություն եւ լրացուցիչ մտերմություն էին ստեղծում:

«Նատերենց» տոհմանունը

Գրիչ Նատերի տոհմի պատմությունն մէջ կարեւոր է անդրադառնալ Նատերենց տոհմանունը: Այն ընտանիքի անդամների անունների կողքին գործածւում էր դեռեւս Նատերի կենդանութեան օրօք: Նատերենք (Նատերանք). այսպէս իրենց կոչում էին տոհմի անդամները, ինչպէս նաեւ ժամանակակիցները եւ յետագայ յիշատակագիրները: Տոհմանունն ամենավաղ գործածութիւնը 1362 թ. Աւետիս գրչի հեղինակած յիշատակարանում է. «Այլեւ զտրուպս ամենայն գրողաց զԱւետիս Նատերանց յիշեցէք...»⁴⁶:

Ազգագրագէտ Ռ. Նահապետեանը հայկական ազգանունն առաջացման պատմութիւնն ուսումնասիրելիս առանձնացրել է ազգանունն ձեւաւորման երեք հիմնական սկզբունքներ՝ նախնու անունով, բնակավայրի անունով, զբաղմունքի անունով⁴⁷: Գիտնականը հանգամանալից քննութեան է ենթարկել նշուած երեք սկզբունքները: Խօսելով ազգի նահապետի անունով ազգանունն մասին՝ նա կարծում է, որ դրա սաղմերը երեւում էին ուշ միջնադարում՝ 17-18-րդ դարերում: Իբրեւ ասուածի վկայութիւն՝ Նահապետեանը նշուած ժամանակաշրջանի աղբիւրներից բերում է «անց», «անք», «եանք», «եց», «ենց» եւ այլ վերջաւորութիւններով ազգանունն ձեւերի բազմաթիւ օրինակներ⁴⁸: Նատերենց տոհմանունը իր յատկանիշներով նմանում է ազգի նահապետի անունով ձեւաւորուած ազգանունը: Նատեր գրչի անունով տոհմանունն կիրառութիւնը վկայում է այն մասին, որ գիտնականի նշած ազգանունն սաղմեր կային ոչ թէ 17-րդ, այլ դեռեւս 14-րդ դարում: Ի դէպ, տոհմանունն գործածութիւնը Ղրիմում եզակի երեւոյթ էր: Միայն 14-րդ դարի յիշատակարաններում կարելի է գտնել այլ օրինակներ եւս՝ Սուքիասեանց, Թորոսանց, Սեւագլխոնց⁴⁹: Այստեղ տեղին ենք համարում յիշել դեռեւս 11-12-րդ դդ. Անիում յայտնի մի շարք գերդաստանների տոհմանուններ, որոնց մանրամասն անդրադարձ է կատարել Կարէն Մաթեոսեանը «Անին եւ անեցիները» մեծարժէք աշխատութեան մէջ: Խօսքը Բեխենց, Հոնենց, Շեխենց եւ մի շարք այլ տոհմերի մասին է, որոնք մեծ հեղինակութիւն ունէին Անիի քաղաքային բնակչութեան շրջանում⁵⁰: Յայտնի է, որ դեռեւս վաղ միջնադարում տոհմանունները գործածւում էին ազնուականների, նախարարական տների շրջանում: Զի բացառւում, որ հասարակ բնակչութեան շրջանում տոհմանունների գործածութիւնը Ղրիմ էր եկել Անիից, որտեղ վաղուց աւանդոյթ էր դարձել: Դա կարելի է բացատրել Անիի եւ Ղրիմի միջեւ առեւտրա-տնտեսական աշխոյժ կապերով⁵¹, ինչպէս նաեւ մոնղոլների կողմից Անիի գրաւումից յետոյ քաղաքի զգալի բնակչութեան՝ Ղրիմ ներթափանցմամբ:

Ինչպէս իրաւացիօրէն գրում է է. Կորիւմագեանը, «Նատերի տան ներկայացուցիչները վայելում էին իրենց վաստակին արժանի հեղինակութիւն»⁵²: Մեծանուն գրիչնե-

⁴⁶ Ժ. Դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 456:

⁴⁷ Տէս Ռ. Նահապետեան, Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես-XX դ. սկիզբ), Պատմաագագրական ուսումնասիրութիւն, Երեւան, 2012, էջ 37:

⁴⁸ Նոյն տեղում, էջ 41:

⁴⁹ Ժ. Դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 402, 518:

⁵⁰ Տէս Կ. Մաթեոսեան, Անին եւ անեցիները, Երեւան, 2021, էջ 265-272:

⁵¹ Անիի եւ Ղրիմի միջեւ աշխոյժ տնտեսական կապերի մասին տես Լ. Խաչիկեան, Հայերը հին Մոսկուայում եւ Մոսկուայ տանող ճանապարհների վրայ, Լ. Խաչիկեան, Աշխատութիւններ, հտ. Բ, Երեւան, 2017, էջ 222 ծմբ.:

⁵² Է. Կորիւմագեան, Ղրիմի հայ մանրանկարիչների մի ընտանիքի մասին, ՊԲՀ, 1968, № 2, էջ 190:

րի մասին գնահատանքի խօսքեր ենք գտնում ժամանակակից եւ յետագայ յիշատակագիրների տողերում: 1364-1365 թթ. Ղրիմում Աւետիս գրչի ընդօրինակած Ճաշոցում (ՄՄ 4656) պահպանուել է 1383 թ. գրուած մի յետագայի յիշատակարան, որում Նատերի տոհմի վերաբերեալ հետաքրքիր յիշատակում կայ: Կարդում ենք. «Ի թուիս հայոց ՊԼԲ. (1383) եւ դեկտեմբեր ամսոյ ի Ա. գնեց պարոն Ուլուպէկն զսուրբ մատեանս Ռ. սպիտակ, ի յԱւետիքէն, եւ է այս Աւետիքս եղբայր Յովել արեղին, եւ սոքա որդիք Յովանէսին, եւ նա՝ Սարգիս քահանային, եւ են սոքա յազգէ Նատերանց»⁵³: Այս տողերից իմանում ենք, որ 1383 թ. պարոն Ուլուպէկը ձեռագիրը գնել է Աւետիքից, որը Յովհաննէսի որդին եւ Սարգիս քահանայի թոռն է: Ըստ յիշատակագրի վկայութեան՝ թուարկւածները Նատերի ազգից են: Ըստ ձեռագրի գրչութեան ժամանակի յիշատակարանի՝ ձեռագրի առաջին ստացողը Սարգիս քահանան է: Հարց է ծագում, արդեօք կարող էր 1383 թ. ձեռագիրը վաճառած Աւետիքը ձեռագրի առաջին ստացող Սարգիս քահանայի թոռը լինել: Փորձենք հասկանալ՝ ընթերցելով ձեռագրի գրչութեան յիշատակարանը: Նատերի որդի Աւետիս գրիչը ստացող Սարգիս քահանայի ընտանիքի անդամների անունները թուելիս տալիս է որդիների անունները՝ Խաչատուր եւ Յովհաննէս⁵⁴: Ստացւում է, որ ձեռագրի ստացող Սարգիս քահանան Յովհաննէս անունով որդի ունէր, որը կարող էր լինել Աւետիքի հայրը: Եթէ ինչպէս յետագայի յիշատակագիրն է վկայում, նշուած անձինք Սարգիս քահանայի ժառանգներն են եւ Նատերի տոհմից, ապա Սարգիս քահանայի Հազարշահ⁵⁵ անունով հօրն էլ պէտք է փնտռել Նատերի ազգականների մէջ: Ի հարկէ նա չէր կարող Նատերի ուղիղ ժառանգներից լինել. որդիների անունները մեզ յայտնի են, իսկ եթէ ընդունենք, որ Հազարշահը Նատերի թոռներից մէկն է, ապա դա ժամանակագրօրէն շատ հեռու է իրականութիւնից: Հազիւ թէ Աւետիս գրիչը իր թոռան կամ եղբօր թոռան պատուերով ձեռագիր ընդօրինակէր: Նկատենք, որ ՄՄ 4656 ձեռագրի ինչպէս գրչութեան ժամանակի, այնպէս էլ յետագայի յիշատակարանները եղծուած բնագրից ընդօրինակել է 1560 թ. յետագայի կազմողը⁵⁶: Քանի որ ձեռագրի նշուած եղծուած հատուածը մեր ձեռքի տակ չէ, եւ յիշատակարանային տուեալները, յատկապէս յետագայի յիշատակարանի թուականը վերստին ընթերցելու հնարաւորութիւն չունենք, չենք կարող վստահ լինել, որ նշուած տուեալները լիարժէք ճշգրտութեամբ են վերարտադրուել 16-րդ դարի կազմողի կողմից: Այնու ամենայնիւ, եթէ նոյնիսկ թուականի ընդօրինակման խնդիր լինի (1383 թ.), միեւնոյն է, հազիւ թէ Աւետիս գրիչը չիշատակէր ձեռագրի պատուիրատու Սարգիս քահանայի՝ իրենց տոհմից լինելու հանգամանքը: Այս դէպքում հաւանական է նաեւ մէկ այլ տարբերակ. գրչութեան ժամանակի եւ յետագայի յիշատակարաններում առկայ անձնանունների համընկնումը պատահական է, եւ Սարգիս քահանայի թոռ Աւետիքը, որ ձեռագիրը վաճառել է 1383 թ., ձեռագրի առաջին ստացող Սարգիս քահանայի հետ ազգակցական կապ չունի եւ Նատերի տոհմից է: Ի հարկէ դժուար է կռահել, թէ 1383 թ. «յազգէ Նատերանց» յիշատակուած Սարգիս քահանայի ընտանիքը Նատերի հետ ինչ ազգակցական կապ ունէր: Այս պահին մեր ունեցած փաստերը թոյլ չեն տալիս գտնել այդ ուղիղ կապը: Առաւել կարեւոր է, սակայն, արձանագրել Նատերանց տոհմանուան հերթական գործածութիւնը Ղրիմում 1383 թ.:

⁵³ ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 547:

⁵⁴ Նոյն տեղում, էջ 467:

⁵⁵ Նոյն տեղում:

⁵⁶ Նոյն տեղում, ծմբ.:


Նատերենց տոհմանունը, ձեւաւորուելով տոհմի նշանաւոր նախնու անունով, իր մէջ ունի նաեւ ընդհանուր զբաղմունքի անունով ազգանունան տարրեր: Յաճախ Նատերի անունով յայտնի գրչի սերունդներին կոչում էին նաեւ տոհմական զբաղմունքն ընդգծելու նպատակով: Այս առումով խիստ հետաքրքրական է տոհմանունան յիշատակումը 1716 թ. Ղրիմում ընդօրինակուած Աւետարանի (ՄՄ 3343) յիշատակարանում: Ձեռագրի գրիչ Դաւիթ Մելանաւորը ձեռագրի գրչութեան վայրն այսպէս է արձանագրում. «...ի յերկիրս Ղրիմու, որ է բնակարան հինն Նատերաց եւ իմաստնացեալ գրչաց»⁵⁷: Նատեր գրչի գործունէութիւնից գրեթէ չորս դար անց դեռեւս յիշատակուող մեծանուն գրչի անունը կարծես «գրիչների» բառի փոխարէն գործածուած լինի. կարծում ենք պատահական չէ բառի գործածութեան դիրքը. «հինն Նատերաց եւ իմաստնացեալ գրչաց»: Կարելի է ենթադրել, որ Նատերի անունն այնքան էր ձուլուել իր մասնագիտութեանը, որ այն յաճախ գործածուում էր մասնագիտութիւնը շեշտելու համար կամ մասնագիտութեան փոխարէն: Ըստ ամենայնի՝ 18-րդ դարի յիշատակագիրը, մեծանուն գրչին յիշատակելով, ցանկանում էր ընդգծել Ղրիմի գրչութեան կեդրոնի հնութիւնն ու հռչակը:

Եզրակացութիւն

14-րդ դարի Ղրիմի հայ գրչութեան կեդրոնում ընդօրինակուած ձեռագրերի շարքում կարեւորագոյն տեղ են զբաղեցնում յայտնի գրիչ Նատերի եւ իր ընտանիքի ստեղծած ձեռագրերը: Նատերենց ձեռագրական ժառանգութեան ուսումնասիրութեանը զուգահեռ խիստ կարեւոր է նաեւ յայտնի տոհմի ուսումնասիրութիւնը: Շնորհալի վարպետների գործունէութիւնը նշանաւորուում էր նաեւ նրանով, որ շատ յաճախ աշխատում էին միասին: Կրտսերներին սովորեցնելը, ապա նաեւ նրանց հետ աշխատելը այս ընտանիքի վարպետների գործունէութեան կարեւոր բաղադրիչներն էին: Ընդհանուր գործի յաջողութեանը նպաստում էին վարպետների միջեւ ազգակցական կապերը եւ ընտանիքում տիրող ջերմ մթնոլորտը: Տոհմի մեծանուն գրիչների, ինչպէս նաեւ ժամանակակիցների թողած առատ յիշատակարանների շնորհիւ մենք հնարաւորութիւն ունենք դարերի հեռաւորութիւնից տեսնել, վերլուծել, փոքրիշատէ ճանաչել հայ գրչութեան պատմութեան կարեւորագոյն դերակատար վարպետներին:

Մեզ համար հիմք ընդունելով Նատերենց ստեղծած ձեռագրերը եւ յատկապէս յիշատակարանները՝ տոհմի մասին եղած փաստերը լրացրել ենք նոր տեղեկութիւններով: Այդպիսով, մեզ յայտնի փաստերի համադրումեամբ կազմել ենք ընտանիքի տոհմաժառ-գծապատկերը: Այն կարող է օգտակար լինել հայ ձեռագրի պատմութեան, յատկապէս Ղրիմի հայ գրչութեան կեդրոնի ուսումնասիրողների համար, ինչպէս նաեւ լրացուել վերջիններիս կողմից:

⁵⁷ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի ամուսն Մատենադարանի, հ. Ժ., ձեռագիրք 3001-3400, խմբագրութեամբ՝ Գեորգ Տէր-Վարդանեանի, Երեւան, 2019, էջ 1443:



ԳՈՀԱՐ ՉԱՏԵԱՆ

Մ. Մաշտոցի անուան Մատենադարանի գիտ. աշխատող

